Տեղեկանք գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 26. Ընտանեկան դրամագլուխը (կապիտալը)

1. Ընտանեկան դրամագլուխը պետական աջակցության հաշվին առկա միջոցներն են:

2. Ընտանեկան դրամագլուխը ձևավորվում է՝

1) երրորդ և հաջորդ երեխայի ծնվելու դեպքում տրվող՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստի՝ պետական աջակցության հաշվին փոխանցած միջոցներից.

2) պետական աջակցության հաշվին առկա միջոցների դիմաց հաշվեգրվող տոկոսներից.

3) պետական աջակցության հաշիվ մուտքագրված օրենքով չարգելված այլ մուտքերից:

3. Ընտանեկան դրամագլուխը մինչև երեխայի (որի անվամբ բացված է պետական աջակցության հաշիվը, այսուհետ՝ հաշվետեր) 18 տարին լրանալը տնօրինում է երեխայի հետ նույն բնակության վայրում բնակվող (հաշվառված) օրինական ներկայացուցիչը (ծնողը, խնամակալը, որդեգրողը)՝ ~~բացառապես~~ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պայմաններով և կարգով անկանխիկ վճարումներ կատարելու նպատակով, բացառությամբ այն դեպքի, երբ առկա է պետական աջակցության հաշվից դրամագլուխն ամբողջությամբ և կանխիկ ստանալու վերաբերյալ երեխայի օրինական ներկայացուցչի գրավոր դիմումը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ օրինական ներկայացուցչի (ծնողի, խնամակալի, որդեգրողի) ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունքը դադարում է համապատասխան հանգամանքը ծագելու օրվան հաջորդող օրվանից, եթե՝

1) ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձը մահացել է կամ դատական կարգով ճանաչվել է մահացած կամ անհայտ բացակայող կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ զրկվել է ծնողական իրավունքներից, կամ սահմանափակվել են նրա ծնողական իրավունքները, կամ

2) հաշվետերը կամ սույն օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասում նշված երեխաներից մեկը տեղավորվել է բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում (մանկատանը) կամ ձեռք է բերել առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ, կամ

3) լրացել է հաշվետիրոջ 18 տարին, կամ

4) վերացել են սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված այն հանգամանքները, որոնց հիման վրա անձը ձեռք է բերել ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք, կամ

5) ներկայացվել է ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձի՝ նոտարական կարգով վավերացված համաձայնությունը՝ ընտանեկան դրամագլուխը հաշվետիրոջ հետ Հայաստանի Հանրապետությունում նույն բնակության վայրում բնակվող (հաշվառված) մյուս ծնողի կողմից տնօրինելու վերաբերյալ:

5. Հաշվետերն իրավունք ունի առանց սահմանափակումների տնօրինելու ընտանեկան դրամագլուխը 18 տարին լրանալուց հետո:

6. Ընտանեկան դրամագլուխը տնօրինելու (պետական աջակցության հաշվից անկանխիկ վճարումներ կատարելու) համար դիմելու կարգը, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, պետական աջակցության հաշիվը բացելու, հաշվետիրոջ մահվան դեպքում ընտանեկան դրամագլուխը տնօրինելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Ընտանեկան դրամագլուխը Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ տնօրինվելու դեպքում պետական աջակցության հաշվից ելքագրված միջոցները ենթակա են բռնագանձման դրանք տնօրինելու համար դիմում ներկայացրած անձից:

8. Ընտանեկան դրամագլուխը չի կարող բռնագանձվել (պետական աջակցության հաշվի վրա արգելանք չի կարող կիրառվել) մինչև հաշվետիրոջ 18 տարին լրանալը:

9. Ընտանեկան դրամագլուխը երաշխավորվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 27. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունքը

1. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի (այսուհետ՝ խնամքի նպաստ) իրավունք ունեն երեխայի՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում (այսուհետ՝ խնամքի արձակուրդ) գտնվող ծնողը, որդեգրողը կամ խնամակալը (այսուհետ՝ ծնող) մինչև երեխայի երկու տարեկանը լրանալը÷, ինչպես նաև երեխայի ծնողը, եթե երեխայի խնամքի նպաստի համար դիմելու օրվա դրությամբ առնվազն մեկ տարի անընդմեջ հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով, և նոր ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը մինչև երեխայի մեկ տարեկանը լրանալը:

2. Խնամքի նպաստը նշանակվում և վճարվում է, եթե ծնողը և երեխան Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված են Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով և խնամքի նպաստի համար դիմելու օրվա դրությամբ գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

3. Եթե ծնողը խնամքի տակ ունի մեկից ավելի մինչև երկու տարեկան երեխա, ապա խնամքի նպաստը նշանակվում և վճարվում է յուրաքանչյուր երեխայի համար:

4. Սույն օրենքի 27-րդ, 28-րդ, 28.1-ին հոդվածների դրույթները չեն տարածվում միկրոձեռնարկատիրության վարձու աշխատողների (մինչև 2020 թվականի հունվարի 1-ը ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված՝ վարձու աշխատող հանդիսացող ընտանիքի անդամների) վրա:

5. Խնամքի նպաստ նշանակելու համար հիմք են հանդիսանում «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկատվական բազայի տվյալները ծնողի՝ խնամքի արձակուրդում գտնվելու վերաբերյալ: Ծնողին վերաբերող տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն սահմանված լինելու դեպքում խնամքի նպաստ նշանակելու առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: